

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Խ. Արուսյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի  
հաշոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի՝ 2020 թ. մարտի 13-ին  
կայացած նիստի թ. 3 արձանագրությունից

Նիստին ներկա են ամբիոնի վարիչ, բ. գ. դ., պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանը,  
բ. գ. դ., պրոֆ. Է. Մկրտչյանը, բ. գ. թ., դոց. Ա. Գալստյանը, մանկ. գ. թ., պ/պ Գ.  
Խալաթյանը, բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը, բ. գ. թ., դոց. Ս. Ղարիբյանը, բ. գ. թ., դոց. Ա.  
Մուրադյանը, մանկ. գ. թ., դոց. Ս. Թորգոմյանը, մանկ. գ. թ., դոց. Ռ. Հարությունյանը,  
բ. գ. թ., ասիստենտ Լ. Ավետիսյանը:

*Լսեցին.* Թամարա Նելսիկի Պողոսյանի «17-րդ դարի աշխարհաբար տպագիր  
գրքերի լեզվական քննություն» թեկնածուականատենախոսության քննարկումը:

*Ելույթ ունեցան.* բ. գ. դ. պրոֆ. Է. Մկրտչյանը բ. գ. թ., դոց. Ա. Յուզբաշյանը և  
բ. գ. թ., ասիստենտ Լ. Ավետիսյանը, որոնք մանրամասն ներկայացրին աշխատանքը  
(գրավոր կարծիքները կցվում են նիստի արձանագրությանը):

Մասնավորապես նշվեց հետևյալը:

Ատենախոսությունը նվիրված է 17-րդ դ. վերջին քառորդին լույս տեսած երեք  
տարբեր բնույթի գրքի լեզվի քննությանը. Ադ երկերի լեզուն նոր գրական հայերենի  
պատմության շրջանաբաժանման մեջ, արդեն տրադիցիա է դարձել, կոչվում է «վաղ  
աշխարհաբարի ենթաշրջանի» նույն, որ, կարելի է ասել, ունի ճշգրտման կարիք՝ թե՛  
տեսականորեն և թե՛ նյութի ավելի մանրամասն քննության առումով:

Նման մանրամասն քննության մի փորձ է սույն ատենախոսությունը, որն իր  
ամբողջության մեջ գնահատելի աշխատանք է: Ատենախոսը լուծել է իր առջև դրված  
խնդիրը, որպիսով որոշակի նպաստ է բերում այդ ենթաշրջանի հայերենի ավելի  
հանգամանալից բնութագրմանը:

Այն բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, վերջում  
բերվում են համառոտագրության և գրականության ցանկեր, ինչպես նաև հավելված:  
Աշխատանքում տարբեր բաժինների և ենթաբաժինների մեջ նկատվում է նյութի

համամասն ընտրություն, կատարվում է մանրամասն վերլուծություն, տրվում են քննության առարկա հարցերի ճիշտ լուծումներ, թեմային վերաբերող տեսական գրականության նկատմամբ կա գիտական պատշաճ մոտեցում:

Աշխատանքի ներածության մեջ ատենախոսն անդրադառնում է այն ուսումնասիրություններին, որոնք տեսականորեն առնչվում են վաղ աշխարհաբարի խնդրին, գործնականում՝ «Արհեստ համարողութեան», «Պարզաբանութիւն» և «Գանձ չափոյ, կշռոյ...» գրքերի երևան գալու արտաքին հանգամանքներին, առավել ևս՝ լեզվին: Առաջին գլուխը նվիրված է հնչյունական երևույթներին և բառապաշարին, մյուս գլուխները՝ քերականական յուրահատկություններ հանդիսացող բուն իրողություններին՝ ձևաբանական և շարահյուսական մակարդակում:

Նշվեց, որ ատենախոսը, քննության առնելով հիշյալ երկերի լեզուն, փորձել է հնչյունական, բառագիտական, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում պարզել հայերենի գրաբարյան, միջինհայերենյան և բարբառային այն շերտերը, որոնք նկատվում են այդ գրքերում, ինչպես նաև այդ երկերի դերը աշխարհաբարի զարգացման գործում: Հայտնի է, որ այդ գրքերը, լույս են տեսել միմյանցից տարբեր ուսումնակրթական կենտրոններում, ներկայացնում են լեզվական ոչ միասնական, առավել ևս՝ ոչ կանոնարկված վիճակ:

Կատարված է բավականին մանրամասն և հիմնավոր ուսումնասիրություն: Առաջին իսկ էջերից երևում է, որ ատենախոսը փորձում է քննական մոտեցում ցուցաբերել ուշադրության առարկա նյութի նկատմամբ, ըստ հարկի արտահայտել ինքնուրույն կարծիք:

Բավականին հանգամանալից ուսումնասիրված է այդ երկերի բառապաշարը, ներկայացված են նրա ծագումնաբանական շերտերը, քննված են փոխառությունները, անդրադարձ է կատարվել դրանցում գործածված տարաբնույթ տերմիններին, առանձնացված են շուրջ երեք տասնյակ նորակազմ բառեր, մեկ տասնյակից ավելի դարձվածային միավորներ, նշվում են ժամանակի աշխարհաբարի բառակազմության առանձնահատկությունները:

Ատենախոսությունն աչքի է ընկնում դրական մի շարք հատկանիշներով, որոնցից կարելի է նշել հետևյալները:

1. Ուսումնասիրությունը կատարված է նյութի համակողմանի իմացությամբ, ընդկրկված փաստական նյութը ատենախոսին հնարավորություն է տվել ըստ ամենայնի ներկայացնելու հետազոտության առարկան.

2. Ատենախոսության համար հատկանշական են հարցադրումների ընդգրկունությունը, քննության առարկայի վիճակագրական ուսումնասիրությունը, վերլուծության պատշաճ մակարդակը.

3. Ատենախոսը լիովին ծանոթ է իր նյութին անմիջաբար առնչվող տեսական գրականությանը, ինչպես նաև հարակից այն աղբյուրներին, որոնցից օգտվում է ըստ անհրաժեշտության:

4. Աշխատանքը գրված է գիտական լեզվով, շարադրանքը գրեթե զերծ է ավելորդություններից, ոչ հստակ ձևակերպումներից:

Եղան որոշ դիտողություններ, որոնցից հարկ կա նշելու հետևյալները:

1. Ատենախոսության մեջ նույնացվում են *էական բայ* և *օժանդակ բայ* հասկացությունները. անվանաբայական ստորոգյալի կազմում է բաղադրիչը օժանդակ բայ է համարվում. ատենախոսը գրում է. «...երկում պահպանվել են գրաբարյան շարադասության հետքեր՝ օժանդակ բայի առաջադասությամբ, ինչպես «...50 սուսկն, որ է մին կարս» (ԱՀ, էջ 54), «...թիվն եղև 80 մառչիլ, որ է բովանդակ ոսկու գինն» (ԱՀ, էջ 128), «Են կէսակէս քրիստոնեայք...» (Գ, էջ 9) և այլն:

2. Ատենախոսը ճիշտ չի ըմբռնում բակառության էությունը: Նախ՝ վկայում է Մ. Աբեղյանի կարծիքը բակառության մասին, թե «բակառությունը սահմանում է որպես քերականական ձև, որով մի բառը համաձայնում է մյուսին ոչ թե ըստ ձևի, այլ ըստ բովանդակության, իմաստի» (ատենախոս., էջ 107), իսկ վկայված օրինակներում՝ հակառակ պատկերը կա. ենթակաները հոգևակի թվով են, ստորոգյալները՝ եզակի. «մտքերս չի խրթվի», «քո նետերդ սրած է», «բազի բաներ կու փոխվի» (ատենախոս., էջ 106-107). Այս օրինակները վկայելուց հետո ատենախոսը գրում է. «Վերոհիշյալ օրինակները բակառության արտահայտություններ են» (նույն տեղում, էջ 107):

3. Շարահյուսական որոշ կառույցներ ճիշտ չեն մեկնաբանված. «Յաղագս, թե ինչ է համարողությունն և թե քանի գիր ունի» (ԱՀ, էջ 1. ատենախոս. էջ 118) կառույցը համարվում է վերաբերության անուղղակի խնդիր երկրորդական նախադասությամբ բարդ նախադասություն, որը ճիշտ չէ: Նախ՝ եթե *յաղագս*-ը

գլխավոր նախադասությունն է, ապա պետք է իմանալ, որ նրա (նախադասության) խնդիրը՝ *այնք*, գեղչված է, որին փոխարինում են երկրորդական նախադասությունները, ուրեմն՝ վերաբերության խնդիր չկա. այդպիսիներ լինում են միասին՝ նախադրությունն ու նրա խնդիրը՝ կապվող բառը, օինակ՝ պատմեն *յաղագս այնք*: *Յաղագս* նախադրությամբ կառույցները առավելապես վերնագրային կիրառություններ են, ինչպես էջ 13-14-ում տրված օրինակներն են՝ ութ օրինակ, յոթը՝ կապվող բառի գեղչումով, որոնց մեջ է նաև վկայված այս օրինակը, մեկը՝ վերջինը, կապվող բառով. «*Յաղագս առևտրից վաճառականաց*» (էջ 114) և այլն:

4. Ատենախոսը, ինչպես երևում է, կողմնակից է հինգ հոլովի տեսությանը, որ մի քանի դեպքում առիթ է տալիս չընդունելու անհամոզիչ բացատրություններն ու մեկնաբանությունները: Նա ընդունում է սեռական-տրական հոլով և վկայում *ձեռաց, հասարակաց, առաջնոյն* (ատենախոս., էջ 60) հոլովաձևեր. հարց է ծագում, եթե հալովը *սեռական-տրական* է, ինչո՞ւ է ասում «*Հոգնակի սեռականի* կազմության հիմնական սկզբունքը գրաբարյան է», կամ՝ «*հոգնակի սեռականը ի թեքույթով է կազմվում*» (նույն տեղում, էջ 60): Նույնպիսի պատկեր ունեն հայցական հոլովին վերաբերող բացատրությունները: Օրինակ՝ գործածվում են հոգնակի հայցականի ձևեր՝ կազմված ուղղական հոլովով և *զ* նախդրով կամ առանց նախդրի, ինչպես՝ *զիմ խնդրվածքն. զիր թշնամիրն. կուզեն մեզ վրա հրամանք բանեցնեն. հրեայքն, զկռապաշտից ազգերն* ժառանգություն տամ քեզ. *ատամներն* ջարդես (ատենախոս., էջ 63): Ճիշտ է, որ այս ուղիով նման հոլովաձևեր են կազմվում, բայց «*զհրամանս > զհրամանքն // զհրամաններն > հրամանք > հրամաններ», «զհրեայսն > զհրեայքն // զհրեաներն > հրեայքն > հրեաներն*» անցումները լուրջ բացատրության են արժանի, և ասել, թե կա ուղղական-հայցական հոլով, բավարար չէ:

Մեկ այլ երևույթ՝ նույն տեսության լույսի տակ. ատենախոսը գրում է. «Ներգոյական հոլովի իմաստ են արտահայտում *ի* նախդիր + տեղանունների ուղիղ ձևեր մեծաթիվ կապակցություններ, ինչպես՝ *ի Ֆրանկստան... ի Համբորգ... ի Դանիմարքն*» (ատենախոս., էջ 66). Ինչպես նաև նշվում է, որ՝ «Ներգոյական հոլովի իմաստ է արտահայտվել նաև տեղանունների ուղիղ ձևերի միջոցով, ինչպես՝ «*Հնդուստան* մին ռուփն 32 փաքափեսայ է» (Գ, էջ 26). «*Հօլանդայ* 1 դուկատն 63 ըստակ է, որ *ըստօյվր* ասի» (Գ, էջ 36) (ատենախոս., էջ 66-67): Այստեղ էլ

ներգոյականի իմաստի արտահայտության մեկնաբանության առիթով ուղղական, հայցական, թե՛ ուղղական-հայցական հոլովների շփոթումնքն է մեջտեղ գալիս: Եթե ուցղղական-հայցական հոլով է ընդունվում, ապա հայցականն առանձին պիտի չբնութագրվեր:

5. *Յուսահատեցուցանէ* ներկա ժամանակի բայաձևը դասված է «առաջին և երկրորդ ապառնիի ձևերի շարքում» (ատենախոս., էջ 80),

6. Միսալ դիտարկում է՝ «*իւր*-ի ներգոյականը հանդիպում է *մէջ*-ով՝ *իմէջ իւր*» (Պ, էջ 768)» (ատենախոս., էջ 86): Նախ՝ պետք է ասել *ներգոյականի իմաստը արտահայտվում է*, քանի որ ներգոյականը հոլով չէ, ապա եթե ստացական դերանունն է, ներգոյականի իմաստը կարտահայտվի *յիւրում* ձևով, իսկ եթե անձնական *իւր*-ն է, ապա իմնաստը կարտահայտվի *ի մէջ* նախադրությամբ՝ *ի մէջ իւր* (սեռ, հոլ.), ոչ թե *մէջ*-ով:

7. Ոչ ճիշտ դիտարկում է, երբ ասվում է՝ «Որոշ կապեր ուղղական հոլովով խնդիր են պահանջում. ինչպես՝ *դէպ ի աջ կողմն* (ԱԷ, էջ 82)» (ատենախոս., էջ 95). Նախ՝ նախդիրները կապեր են դարձել, իսկ հայցական հոլովը՝ ուղղական, ուստի *դէպի*-ն գրական աշխարհաբարում է կապ:

8. *Ուզել* բային վերաբերող բացատրություններում պիտի հաստատել, որ *ուզէմք բաժանել, կուզեն բանացնեն, կուզէր անել, կուզենան պոզահարել* և այլն կառույցներում այն գործածվում է իբրև եղանակավորիչ բառ:

9. Ցանկալի էր, աշխատանքի վերջում բերվող եզրակացություններն ավելի հակիրճ լինեին, օրինակ՝ 3-րդ կետի եզրակացությունը համակարգչային մեկ էջ է, 4-րդ կետն ունի մի քանի ենթակետեն և այլն:

10. Ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ շարադրանքով, սակայն նկատվում են լեզվական անճշտություններ (էջ 13, 14, 17, 33, 60, 73, 84, 123), ոճական անեարթություններ (էջ 41-42, 48), վրիպակներ ( էջ 56, 89), տեսական գրականության վերնագրերի ոչ ճիշտ նշումներ:


Վերը բերված դիտողություններն ու նկատառումները վերաբերում են մասնավոր դեպքերի և ամեննին չեն անդրադառնում ատենախոսության դրական և գնահատելի կողմերի վրա. դրանք կարելի է շտկել կամ նկատի ունենալ հետագա աշխատանքների ընթացքում:

Որոշեցին. Թ. Ն. Պողոսյանի «17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերի լեզվական քննություն» թեկնածուականատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, լուծված է իր առջև դրված խնդիրը, որը նպաստ է արդի հայերենագիտության զարգացմանը նոր գրական հայերենի պատմության մեջ, ուստի նրա հեղինակին կարելի է շնորհել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Ակադ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և

նրա դասավանդման մեթոդիկայի

ամբիոնի վարիչ


 Վ. Գ. Համբարձումյան



Հաստատում եմ

Վ. Գ. Համբարձումյանի ստորագրությունը

գործարարություն

 Մ. Իսպիրյան